

Գաղտնի մամբան. քերթուածներ զրեց՝
Ժաղ Ս. Յակոբեան, Գահիրէ, 1938:

Յիսուն եւ ութը քերթուածներով հա-
մեստ հատոր մը, « Գաղտնի ճամբան »:
Երկու մասերու բաժնուած է ան.

ա. — Հեռուներ... Հեռուներ... եւ
բ. — Կապոյտ Հէֆեաթ.

« Հեռուներ... հեռուներ... » որ 24 քեր-
թուածներ կը պարունակէ, կարօտի եւ
զգացումի մըմունքներ բնութեան հանդէպ
իրմէ հեռու եւ իր շուրջը տարածուող
բնական զեղեցիկութիւններու առջեւ. ու-
րոնց դէմ ան կարօտով կեցեր է.

Այնքան կարօտ եմ կանչին սրինդի մը հեռաւոր,
Այնքան կարօտ հեքեաթին երազող ջինջ աչքերուն
Որ կ'ըզձայի բանալ սիրտս ամէն լոյսի եւ հովի...

Կ'ուզէ վայելել զանոնք, ապրիլ անոնց հետ
եւ անոնց մէջ մոռնալ կեանքի ամէն դառ-
նութիւն եւ վիշտ:

Կը սիրէ ալդը՝ եւ անոր հազար ու մէկ
խորհուրդի ժամերը, եւ երբ կ'իջնէ արեւ-
ւը լեռներէն՝ ան զինքը երջանիկ կը դրայ
դիտելով զայն կանգնած իր առջեւ. սա-
կայն իր ամենէն դիւթական ժամերը երե-
կոյան ժամերն են, երբ մութը կը կոխէ
ան կը խորասուզուի լուսութեան մէջ եւ հոն
կը պատկերացնէ իրիկուան անցնող կեան-
քը, որ քիչ վերջ զգացում կը դառնայ.

Տակաւ կը զգամ ճաճանչի մը հոգեւարքն հոգեթով,
Ու կը լսեմ փոքր հօտին բոժոժներուն մէջ թոթով,
Խոտին բոյրին պլլուած, սիւքերուն պարն սսկհհհ.

Տամուկ իրիկուան մշուշը կ'իջնէ իր շուր-
ջը, եւ ան կը հանդէս ալդ իրիկուան խա-
ղաղ երազներու մէջ: Կը բացուի ալդը եւ
այն « Բլրան լանջին » է նստած, գիւղի
կեանքը կը վերսկսի, զեղջիկուհին կ'իջնէ
աղբիւր ջուր առնելու, կը սիրէ բանալ իր
ճակատը հովին եւ վայելել բնութիւնը:

բ. — Կապոյտ հեֆեաթի մէջ՝ որ երկ-
րորդ մասն է, հեղինակը կը պատկերացնէ
եւ կ'երգէ սէրը եւ մանկութիւնը եւ կեան-

քի զանազան պատկերները, նոյն ոճով:

Պ. Ս. Յակոբեանի քերթուածներու այս
հատորը իր պարունակութեամբ որ պէտք
էր իր նիւթին համեմատ՝ բնութիւն, հա-
ղաւթ ազդեցութիւն մը թողուլ, հա-
կառակը կը պատահի. խորհրդապաշտ
միտք մըն է նա, իր քերթուածները մութ
դոյններու տակ կը սիրէ ծածկել. պար-
զութիւնը եւ յստակութիւնը՝ որ ու եւ է
զրութեան մը անհրաժեշտ տարրն է զեղե-
ցիկը կազմելու համար՝ տուժած են. սա
զուցէ արդիւնք ըլլայ խոր երեւակայու-
թեան որով օժտուած է Յակոբեան: Երե-
ւակայութիւնը բանաստեղծութեան առա-
ջին աղագին է, որ կեանք եւ դոյն կու տայ
զրութեան մը, պայմանաւ որ երեւակա-
յութիւնը դէթ իրականութեան հետ նմա-
նութիւն մ'ունենայ իր խորքին մէջ եւ ոչ
թէ բոլորովին ցնորական, ինչ որ անհա-
ճօյ կը դարձնէ: Յակոբեան կը սիրէ նոյն-
պէս խորհրդաւոր իմաստներ եւ բառեր,
ածականներ, որոնք երբեմն իրենց պաշ-
տօնը եւ ընելիքը չեն գիտեր. լոյծ շնորհ,
լոյծ հեռու, լոյծ դաշտանկար, լոյծ կու-
սութիւն, լոյծ պահ, լոյծ թիթեռնիկ,
լոյծ ճամբայ, յարմարցնելու ենք կամ
մեկնելու: Նոյնպէս՝ թաւիշ զօղանջ, թա-
ւիշ կուսութիւն, բոյր մը շափիւղայ, հո-
տեւան սարսուռ, կապոյտ զրգանք, երա-
զուն զծեր, եւն, շատ մութ կը թողուն
իրենց իմաստը: Ասոնց հակառակ ճօխու-
թիւն մը կը տեսնուի բառամթերքի իր
քերթուածներուն մէջ, խուսափում մը
խժաճայնութենէ. ընտիր եւ գունագեղ
պատկերները անպակաս են անոնց մէջէն,
որոնք Յակոբեանի բանաստեղծի խառ-
նուածքը ցոյց կու տան: Ըսինք թէ երե-
ւակայութիւն եւ արուեստի զծեր, ներ-
դաշնակութիւն եւ լեզուական պաշար ունի
Յակոբեան. ուսկից կը հետեւի որ կրնայ
հրամցնել մեզի ապագային աւելի յաջող
եւ մնայուն արժէքով քերթուածներ. ահա
ինչ որ անկեղծօրէն կը մաղթենք եւ կը
սպասենք:

Հ. Մ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ~ ԴՊՐՈՅԱԿԱՆ

Ա. — ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ ԹԱՐԳՄԱՆԶԱՅ ՏՕՆԻՆ

Որքան որ արդէն ծայր տուած էր մեծ պատե-
րազմի մը արհաւիրքը եւ մթադին հորիզոնը կը
սպառնար սուգի փոխել ամառնային արձակուրդի
քաղցր օրերը, Ս. Թարգմանիչներու տօնը սակայն
իր կրօնական — մշակութային նուիրականութեամբ
հոգեկան կազդուրը եւ սիրովանք շնորհեց ամէնուս:

« Ս. Զենոն » վանքիս հովասուն ամարանոցի մէջ
էր որ տեղի ունեցաւ զրական զեղեցիկ ակումբը,
պատրաստուած Ուխտիս բարձրագոյն Աշակերտնե-
րու կազմակերպութեամբ: Կէս — բացօթեայ կա-
մարներու տակ դալարագեղ դրամանդներու եւ
ծաղիկներու մէջ կը հրճուէին Ս. Թարգմանչաց
լուսապասկ դէմքերը, որոնց առջեւ պաշտամունքի
եւ երպրատագրութեան զգացումներով հաւաք-
ուած էին Ուխտիս Հայրերն ու բոլոր Աշակեր-
տութիւնը:

Յոտնկայս լսեցինք Թարգմանչաց քայլերգը.
ուսկից յետոյ սաներէն մէկը բացատրեց Հայ Մշա-
կութի ալդ բացառիկ տօնը, շեշտելով թէ անոր
նպատակը լոկ զրուստիքը չէր՝ որ պիտի հիւսուէր
անոնց համար, այլ գիտակից պարտականութիւնը
շարունակելու անոնց դործը՝ յանուն Հայ ազգին
պահպանութեան եւ Հայ Եկեղեցւոյ պայծառու-
թեան:

Օրուան գլխաւոր բանախօս սանը նիւթ ունէր
եզնիկի « Եղծ աղանդոց » որպէս նշանակելի գործ
Ոսկեղաբու բովէն: Արիստոտէլեան կամ Դպրո-
ցական իմաստասիրութեան գլխաւոր բաժանումնե-
րով վերլուծեց Եզնիկի երկը հակամարտական —
հոգեբանական — Աստուածաբանական ճիւղերով,
ճանաչաւ Նախախնամութեան եւ Աստուծոյ կան-
խաղիտութեան եւ մարդու ազատութեան աղբիւրն
մասին, ցուցնելով ամէն մասի մէջ Եզնիկի պայծառ
միտքը եւ իմաստասիրական դրութիւններու զօրեղ
կառուցուածքը՝ անվկանդ փաստերով:

Կոմիտասեան եռաձայն խմբերգէ մը վերջ
ունինդերցինք Զարեհի « Ես իմ անուշ » ապա-
զնահատական տեսութիւն մը մեր Ոսկեղաբու մա-
տենագրութեան զրական արդիւնաբերութեան զայն
նկատած յինքեան եւ օտար մատենագրութեանց
համեմատական ուսումնասիրութեամբ:

Ապա կարօտով լսեցինք « Մայր Արաքսի », եւ
զրարար զգայուն զեղօն մը նուիրուած Թարգման-
չաց Կաճառին:

Պանդալատ « Բամ. փորձան » կնիքը դրաւ
նուիրական հանդէսին: Ուխտիս Ընդհ. Արքայալոր
նուիրական հանդէսին: Ուխտիս Ընդհ. Արքայալոր
քանդակելի խօսքերով ոգեկոչեց ամբաս Թարգմա-
նիչներու յիշատակը իրենց կատարած հսկայ գոր-

ծին մէջ, քաջալերեց Աշակերտութիւնը, շեշտելով
անոնց թէ « Պարերը կը գլորին բայց Թարգմանիչ-
ներու լուսապասկը երբեք չի աղօտանար. անոնց
հետեւող Հայութիւնն ալ օր մը պիտի հասնի իր
տենչերուն եւ կենսուրախ ազատութեան »:

Հ. Ա. ԾՈՎԵԱՆ

Բ. — ՎԵՐԱԲԱՅՈՒՄԸ ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆԻՆ — ՎԵՆԵՏԻԿ

Այս տարի մեր վարժարանին վերարացումը
տեղի ունեցաւ Հոկտեմբեր 16-ին:

Առաւօտ, վարժարանին մատրան մէջ տեղի
ունեցաւ պատարագ եւ եկեղեցական արարողու-
թիւն, ինչպէս բոլոր խաղական վարժարաններուն
համար, Աստուծոյ օրհնութեամբ սկսելու ուսու-
մնական նոր տարին:

Ժամը 10,30-ին բոլոր Աշակերտութիւնը՝ հա-
ւաքուած վարժարանին պերճագեղ դահլիճին մէջ,
Տեսչական եւ Ուսուցչական մարմինն ներկայու-
թեան, Ուխտիս Ընդհ. Արքայալոր սրտապնդիչ խօս-
քերը լսեց:

Գերպ. Արքայալոր յստակօրէն դժեց անոնց
առջեւ բարձր եւ ազնուական նպատակները՝ որոնց
համար Բարերարներն ու մեծն Մխիթար զերագոյն
զոհողութիւններ կատարած էին՝ յանուն եւ յօգուտ
Հայ ազգին: Մտքի լուսաւորութիւն եւ սրտի
կրթութիւն՝ գիտութեան եւ առաքինութեան ստա-
ցումով պիտի ծառայէին արժէքաւորելու կեանքը
եւ զայն նուիրելու Ազգին բարօրութեան. ահա ինչ
որ կ'ակնկալեն Երկինք, Մարդկութիւն եւ յատ-
կապէս մեր կարօտ Ազգը:

Գերպ. Արքայալոր զեղեցիկ խօսքերու կնիքն
եղաւ հայրական օրհնութիւնը որով կը հայցէր
Աստուծոյ բեղնաւորել տարին՝ լիառատ պտուղներ
հասցնելու, ի մխիթարութիւն վաստակաւոր Հայ-
րերուն որ զոհարեցութեամբ կը նուիրուէին մեր
սերունդին դաստիարակութեան:

Գ. — ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ (ՓԱՐԻՋԻ)

Դժբախտաբար փակ կը մնայ մեր Փարիզեան
վարժարանը առ այժմ՝ տիրող պատերազմին պատ-
ճառով. եւ չենք ալ կրնար ըսել թէ ե՞րբ հնարաւոր
պիտի ըլլայ անոր վերարացումը:

Աւա՛ղ, երբ ան հազիւ իր առաջին տասնա-
մեակը կը բոլորէր արդէն փայլուն դիւրի մը հա-
սած եւ ցանկալի արդիւնքներ տուած, ահա կ'ընդ-
հատուի պատերազմով մը որ, յոյժ ցաւալի է ըսել,
ոչ միայն հացն ու կրթութիւնը կը խէ մեր աղոց